Ալեքսանդր Ծիրվանզադե

Համբերիր

Անցնում է կառքերի և օտոմոբիլների շարքը, պատերազմի առաջին զոհերին տեղափոխելով երկաթուղու կայարանից հիվանդանոցները: Ուժասպառ, արյունաքամ, վիրավորների գունատ ու մռայլ դեմքերի վրա կարդացվում են նրանց մարմնավոր տանջանքներն ու հոգեկան տառապանքները: Ոմանց աչքերը փակ են, և մահը, կարծես արդեն դրել է իր դրոշմը նրանց հողագույն ճակատների վրա:

Ամբոխը, մայթերի վրա շարեշար կանգնած, դիտում է հայրենիքի պաշտպաններին լուռ ու մունջ: Կանայք տխուր հառաչում են և իրենց տպավորությունները հաղորդում իրարու կիսաձայն: Կարծես երկնչում են խանգարել բոպեիս սրբազան խորհրդավորությունը: Ոմանք լալիս են անձայն:

Անցնում եմ մի հարուստ կազմակերպված հիվանդանոցի մոտով, որ գտնվում է քաղաքի ամենակուշտ արվարձանում: Հոյակապ շենքի առջև ժողովվել են մի քանի տասնյակ երիտասարդ և ծեր կանայք: Մի քանիսը եկել են իրենց փոքրիկ երեխաների հետ: Կանգնած են նրանք գլխակոր, անխոս, վշտահար՝ ինչպես սգավորներ: Եկել են տեսնելու իրենց մերձավորներին:

Փառահեղ դռների առջև ցցվել են մի քանի հաղթանդամ ոստիկաններ ինչպես դրակոններ, սակայն տխուր, մտազբաղ: Նրանք ոչ ոքի չեն թողնում. մեկին հրում են, մյուսին համոզում սպասելու, վասնզի «դեռ հրամայված չէ» ներս թողնելու:

Մոտենում է դռներին մի օտոմոբիլ և կանգ առնում: Դուրս են գալիս նրա միջից շքեղ հագնված երկու տիկիններ, թե օրիորդներ, չգիտեմ: Ոստիկաններն իրենց

մեծի նշանով բաց են անում դռները և պատկառանքով ճանապարհ տալիս եկածներին: Ուրախ-ուրախ խոսելով, նրանք բարձրանում են ընդարձակ մարմարյա սանդուղքով վեր, տանելով իրենց հետ ինչ-որ կապոցներ ու տուփեր:

Թողե՛ք, թողե՛ք, գոչեց մի նիհար, երիտասարդ կին, վաղաժամ թառամած:

Մի ձեռով նա գրկած է ծծկեր մանկան, մյուս կռան տակ բռնած է մի կապոց:

Թողե՛ք, կրկնում է նա, ես պետք է տեսնեմ նրան: Ես նրան ճանաչեցի, իմ մարդուն, երբ կառքով բերում էին: Նա թույլ էր, շատ թույլ: Ո՞վ գիտե, կարելի է... մեռնում է... թողե՛ք...

Քույրիկ, հրամայված չէ, սպասիր, պնդում է ոստիկանը, աշխատելով իր բիրտ ձայնին տալ կարողացածին չափ մեղմություն:

Եվ դռները աղմուկով փակում է նրա առջև:

«Քույրիկն» արտասվում է, մի ձեռից մյուսն անցկացնելով ծծկեր երեխային, որ վիրավորի զավակն է: Եվ արտասուքը սրբում է իր գլխի հնամաշ շալի ծայրով:

Գալիս են դարձյալ կառքեր և օտոմոբիլներ և բերում են ինչ-որ առողջ ու կուշտ դեմքերով կանանց ու տղամարդկանց: Ամենքի առջև բացվում են դռները և ամենքը մարմարյա սանդուղքով բարձրանում են վեր:

Մի կառքից իջնում են երկու տակավին երիտասարդ պարոններ, մեկը կարմիր-կապտագույն ուռած դեմքով, մյուսը նիհար և այնպիսի հոգատար դեմքով, որ, կարծես, վիրավորներին խնամելու ամբողջ ծանրությունը նրա ուսերի վրա է: Նրանք ցույց են տալիս ոստիկանին մի-մի թղթի կեղտոտ կտոր այնպիսի ձևով, որ թվում է, թե առանց իրենց ներկայության աշխարհի երեսին չէ կարող կատարվել և ոչ մի մարդկային գործ և եթե կատարվի, անմիջապես կխորտակվի:

Դռներն իսկույն բացվում են նրանց առջև: Ինչո՞ւ նրանց թողիք, հարցնում է ծծկեր մանկան մայրը:

Նրանք թղթակիցներ են, պատասխանում է ոստիկաններից մեկը:

Երկու ժամ անցած՝ նորից անցնում են նույն հիվանդանոցի մոտով: Կողմնակի մարդիկ ցրվել են, մնացել են միայն վիրավորների մերձավորները:

Դռներից դուրս են գալիս և օտոմոբիլ նստում շքեղ հագնված տիկինները և օրիորդները: Մեկը մյուսին ասում է.

Ես պարտքս կատարեցի, կարող եմ հանգիստ ճաշել:

Ես ևս, պատասխանում է մյուսը:

Դռներից դուրս են գալիս թղթակիցները: Մեկը նրանցից, ծոցը դնելով հուշատետրն ու մատիտը, ասում է մյուսին.

Եթե խմբագիրը չկրճատի, այսօրվա վաստակս կլինի տասնուհինգ ռուբլի:

Իմն էլ այդչափ, պատասխանում է մյուսը:

Ծծկեր մանկան նիհար մայրը, արտասուքը աչքերին, հարյուրերորդ անգամ մոտենում է ոստիկանին ու հարցնում.

Հիմա թույլ կտա՞ք, որ նրան տեսնեմ:

Համբերիր...

Նույն պահին դռները նորից բացվում են, և հիվանդանոցի ծառաները պատգարակի վրա դուրս են բերում վիրավորներից մեկին: Նրա աչքերը փակ են, դեմքը հանգիստ:

Մեռավ, արտասանում է պատգարակը տանողներրից մեկը թույլ ձայնով:

Ծծկեր մանկան նիհար մայրը նայում է պատգարակի վրա տարվողի երեսին: Լսվում է մի սուր, երկարատև ճիչ, և նա թուլացած ընկնում է երեխայի հոր դիակի վրա՝ երեխայի հետ միասին: